ԿՅԱՆՔԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գևորգ Արամի Պողոսյանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ է, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1996 թ.՝ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, 1992 թ.՝ Հայկական սոցիոլոգիական ընկերակցության (ՀՍԸ) հիմնադիր նախագահ:

Ծնվել է 1950 թ. Երևանում, 1974 թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի բաժինը, 1983 թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական, իսկ 2003 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ սոցիոլոգիայի գծով:

1975-1977 թթ. աշխատել է Ա. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում՝ որպես գրադարանավար, 1977 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում՝ կրտսեր գիտաշխատող, 1985-1990 թթ.՝ գիտաքարտուղար, 1990 թ.՝ սոցիոլոգիայի բաժնի վարիչ, 1990-1991 թթ.՝ տնօրենի տեղակալ, իսկ 1996-ից՝ տնօրեն:

Գ. Պողոսյանը 1992-ից Միջազգային սոցիոլոգիական ընկերակցության անդամ է, 1995 թ. ընտրվել է ԱՊՀ Սոցիոլոգիական ընկերակցության փոխնախագահ, 1998 թ.՝ Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ, 2000-ից Ռուսաստանի Դաշնության "Социологические исследования" ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ է և Հայաստանում ՌԴ «Ակադեմիա» հրատարակչության պաշտոնական ներկայացուցիչը:

Գ. Պողոսյանը 1994-1995 թթ. համատեղության կարգով աշխատել է որպես ՀՀ վարչապետի խորհրդական: 1995 թ. ԱՄՆ-ի Ֆուլբրայթի անվան ծրագրով հրավիրվել է գիտական ուսումնասիրություններ իրականացնելու Դելավերի համալսարանի Աղետների սոցիոլոգիայի կենտրոնում: 1996 թ. ընդգրկվել է ՀՀ Նախագահին կից գիտության և առաջատար տեխնոլոգիաների խորհրդի կազմում, 1997 թ. ՀՀ գիտության և կրթության նախարարության փորձագիտական խորհրդի անդամ է: 2005 թ. նշանակվել է ՀՀ Նախագահին կից «Մարդասիրական արժեքների տարածման համար» ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովի նախագահ: 2008-ից ՀՀ ԲՈՀ-ի 062 «Սոցիոլոգիայի և քաղաքագիտության» մասնագիտական խորհրդի նախագահն է, ինչպես նաև մի շարք գիտական և ուսումնական հաստատությունների խորհուրդների անդամ: 2007 թ. նա արժանացել է Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե մեդալի:

1996-1999 թթ. Գ. Պողոսյանը մասնակցել է Ժնևում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի տարեկան նիստերին՝ նվիրված փախստականների ու միգրացիայի հարցերին: 1997 թ. Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) և

Փախստականների նորվեգական խորհրդի (NRC) աջակցությամբ հիմնել է միգրացիոն սեկտորի հասարակական կազմակերպությունների զարգացման կենտրոն և իրականացրել բազմաթիվ ուսումնասիրություններ փախստականների և միգրացիայի շրջանում: Նա հանդիսացել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ազգային փորձագետ և 1997 թ. տնօրինել Մարդկային զարգացման զեկույցը Հայաստանում: 1997 թ. նրա աջակցությամբ Հայաստանում հիմնվել է Ջ. Սորոսի հիմնադրամի «Բաց հասարակության ինստիտուտը»: Իր բազմամյա գործունեության ընթացքում նա ղեկավարել է մի շարք ազգային զեկույցների մշակումը և ներկայացումը միջազգային ատյաններում՝ «Կանանց իրավիճակը ՀՀ-ում» (UNDP, Պեկին, 1995 թ.), «Մարդկային զարգացման զեկույց. Սոցիալական համագործակցություն» (UNDP, Ե., 1997 թ.), «Փախստականների սոցիալական իրավիճակը ՀՀ-ում» (UNHCR, Ժնև, 1997 թ.), «Գեղարվեստական կրթությունը XXI դարում» (UNESCO, Սեուլ, 2010 թ.):

Նրա հիմնական աշխատանքները նվիրված են սոցիոլոգիայի մեթոդաբանության, սոցիոլոգիական տեղեկատվության հավաստիության հարցերին, աղետների, միգրացիայի, քաղաքական սոցիոլոգիական տեսությունների մշակմանը, անցումային շրջանի հասարակությունների առանձնահատկություններին: Գ. Պողոսյանի առաջին մենագրությունը՝ «Հարցազրույցի մեթոդը և սոցիոլոգիական ինֆորմացիայի արժանահավատությունը» (1985 թ., ռուսերեն), ներառված է ՌԴ-ում ասպիրանտներին հանձնարարելի գրականության ցանկում: Երկրորդ աշխատությունը՝ «Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում» (1987 թ.), հայերենով առաջին մեթոդական ձեռնարկն է: Նա Հայաստանում նույնպես հիմնադրել է սոցիոլոգիայի այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են աղետների սոցիոլոգիան, քաղաքական սոցիոլոգիան, միգրացիայի սոցիոլոգիան, սոցիոլոգիական հետազոտությունների այնպիսի ասպարեզներ, որոնք բովանդակային առումով և տեսական բարձր որակներով առնչվում են հայրենական իրականությանը: Վերջին տասը տարիների իր գիտական վերլուծությունները ամբողջովին նվիրված են ժամանակակից հայ հասարակության հիմնախնդիրներին և լայն ճանաչում են ստացել շնորհիվ հետևյալ մենագրությունների՝ “Армянское общество в трансформации” (2003), «Հայ հասարակությունը XXI դարասկզբին» (2006), “Современное армянское общество. Особенности трансформации” (М., 2005), «Հայաստան. Օտարացած հասարակություն» (2007, համահեղինակներով):

Գ. Պողոսյանի գիտական ու հասարակական գործունեությունը քաջ հայտնի է ոչ միայն Հայաստանում ու հարավկովկասյան տարածաշրջանում, այլև դրա սահմաններից դուրս: Նա գիտական զեկուցումներով հանդես է եկել չորս համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսներում (1991 թ., 1995 թ., 1998 թ., 2010 թ.), բազմաթիվ միջազգային գիտաժողովներում, մասնակցում է մի շարք միջազգային գիտական ծրագրերի:

Գ. Պողոսյանի գիտական ղեկավարությամբ պատրաստվել են սոցիոլոգիայի արհեստավարժ կադրեր, պաշտպանվել է յոթ թեկնածուական և մեկ դոկտորական ատենախոսություն: Նրա հետևողական աշխատանքի շնորհիվ ակադեմիական սոցիոլոգներն արդյունավետ գիտական համագործակցություն են ծավալել միջազգային կազմակերպությունների համաշխարհային սոցիոլոգիական կենտրոնների հետ ԱՄՆ-ում, Եվրամիության երկրներում, Սևծովյան համագործակցության երկրներում, ԱՊՀ-ում, Չինաստանում, Հարավային Կորեայում և Թայվանում:

Գ. Պողոսյանը 17 մենագրությունների և ավելի քան 100 գիտական հոդվածների հեղինակ է: Նրա հոդվածները տպագրվել են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում և գնահատվել ըստ արժանվույն:

Որպես գիտնական՝ նա էական ներդրում ունի Հայաստանում սոցիոլոգիական գիտության ձևավորման և զարգացման գործում: Սոցիոլոգիական գիտության հիմնախնդիրները նրա աշխատություններում արծարծվել են լայն ընդգրկումներով և ստացել արդիական մեկնաբանություններ ու լուծումներ: Հարկ է նաև արժանին հատուցել հատկապես մեր հանրապետությունում դրանց գիտագործնական նշանակությանը:

Գ. Պողոսյանը, որպես մարդ, շատ սրտացավ և հոգատար է գործընկերների ու ինստիտուտի բոլոր աշխատակիցների նկատմամբ: Գիտության և աշխատանքի հմուտ կազմակերպիչ է: Իր անձնական նախաձեռնությունների շնորհիվ ինստիտուտում բարելավվել են նյութատեխնիկական պայմաններն ու աշխատակիցների սոցիալ-տնտեսական վիճակը: Վերջապես նշենք, որ Գ. Պողոսյանը պարկեշտ և շիտակ անձնավորություն է, լավ ընկեր, լավ ամուսին և հայր, նաև իր չորս թոռնիկների համար՝ սիրելի պապիկ:

ԽԱՉԻԿՅԱՆ ՅԱ. Ի.
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր